ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 45 - 46 (16440) ՇԱԲԱԹ, 11 ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ

Վրաստանում հունիսի 8-ին մեկնարկել է խորհրդարանական ընտրություններին նախորդող նախընտրական արշավը:

Վրաստանում խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն հոկտեմբերի 8-ին: Օրենսդիր մարմնի տեղերի համար նախնական տվյալներով կպայքարեն 30-ից ավելի կուսակցություններ: Կուսակցությունների գրանցումը կշարունակվի ընդհուպ մինչեւ օգոստոս: Բացի այդ, հոկտեմբերի 8-ին կանցկացվեն նաեւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները:

Երկրի Ընտրական օրենսգրքի համաձայն՝ կուսակցություններն արդեն քարոզչական պլակատներ փակցնելու եւ քարոզչության իրավունք ունեն, բացի այդ, ուժի մեջ է մտել վարչական ռեսուրսների օգտագործման արգելքը: Նաեւ սկսել է գործել կուսակցությունների նախընտրական արշավին բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցության արգելքը:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ընտրությունների ամսաթվի նշանակման մասին կարգադրությունն ստորագրել է հունիսի 3-ին, իսկ հունիսի 8-ին այն ստորագրել է Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նշենք, որ դա ընտրություններից առաջ ամենաերկար ընտրարշավը կլինի ժամանակակից Վրաստանի ողջ պատմության ընթացքում:

ԱՅՑ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հունիսի 6-9-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ստրասբուրգում եւ Բրյուսելում:

Այցի շրջանակներում Վրաստանի նախագահը ելույթ ունեցավ եվրախորհրդարանի արտաքին կապերի կոմիտեում, խոսեց Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների վերաբերյալ: Ստրասբուրգում Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Տուրբեռն Յագլանդի, եվրախորհրդարանի արտաքին գործերի կոմիտեի նախագահ Էլմար Բրոկի, եվրախորհրդի նախագահ Մարտին Շուլցի հետ: Հանդիպումներում քննարկվեցին Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի, անվտան-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽԻԶԱԲԱՎՐԱՅԻ ԴԱՐԱՎԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ TBC GROUP-Ի ԲԱԺՆԵՏԵՐ ՄԱՄՈՒԿԱ ԽԱԶԱՐԱԶԵԻՆ

Հունիսի 4-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եղավ Սամցխե-Ջավախեթիի Ասպինձայի շրջանում Խերթվիսի-Վարձիա հատվածում: Նրա այցը պայմանավորված էր «Խիզաբավրայի մեսխեթյան դարավանդների» տարածքում մեսխեթյան տեսակի խաղողի տնկարկման պատմական ընթացակարգով:

Արարողությանը վարչապետից բացի, մասնակցեցին մեսխեթյան դարավանդների նախագծի հեղինակներ, TBC Group-ի բաժնետեր Մամուկա Խազարաձեն, ինչպես նաեւ «Վարձիայի դարավանդների» տնօրեն Գիորգի Նաթենաձեն: Նախագիծը Վրաստանի կառավարության կարգադրությամբ՝ 2015 թվականի մայիսին անմիջական գնման կարգով փոխանցվեց «Վարձիայի դարավանդներ»

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

«ԿԱՆԱՉ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ»՝ ԱՊԱԳԱՅԻ ԵՐԱՇԽԻՔ

Հունիսի 8-ին Բաթումիում մեկնարկեց «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» խորհրդաժողովը, որտեղ քննարկվեցին օդի որակի բարելավմանը նվիրված հարցերը՝ ավելի լավ միջավայր ստեղծելու եւ մարդու առողջության համար:

Նշենք, որ առաջին նման խորհրդաժողովը կայացել էր 1991 թվականին Պրահայի մերձակա Դոբրժիշ դղյակում:

Խորհրդաժողովի բացման իր խոսքում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ Վրաստանը գիտակցում է «կանաչ էկոնոմիկայի» կարեւորությունն ու նշանակությունը եւ օժանդակում է այդ բնագավառում իրականացվող տարբեր նախագծերի:

Վարչապետի խոսքերով, այդ ուղղությամբ տարածաշրջանում իրականացվող նախագծերը նշանակալի կայունություն կհաղորդեն Հարավային Կովկասին եւ կնպաստեն Եվրոպայի էներգամատակարարմանը:

Խորհրդաժողովին մասնակցելու համար Բաթումի են ժամանել աշխարհի 56 երկրների շուրջ 600 ներկայացուցիչներ, որոնք զբաղվում են շրջակա միջավայրի եւ բնապահպանների հարցերով:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

Հունիսի 3-ին Դիլիջանում անցկացվեց «Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի» համատեղ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) նիստը, որի ընթացքում քննարկվել են ծրագրի իրականացման առաջին արդյունքներն ու նվաճումները:

Նիստում վրացական կողմը ներկայացնում էր Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ Թենգիզ Շերգելաշվիլին, հայկական կողմը՝ Հայաստանի տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը: Նիստին մասնակցեցին նաեւ Եվրամիության (ԵՄ) Հայաստանի պատվիրակության ղեկավար Պյոտր Սվիտալսկին, ԵՄ Արեւելյան գործընկերության տարածքային համագործակցության (ԱԳՏՀ) աջակից ծրագրի փորձագիտական խմբի ղեկավար Ալեքսեյ Սեկարեւը, Աջակից ծրագրի ղեկավար մարմնի՝ GIZ-ի թիմի ղեկավար էրկ Ռոելոֆսը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑԵԳԻՐ

ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ-ՄԵՐԿԵԼ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԻ ԹԵՄԱՆ ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԷՐ

Հունիսի 7-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ կայացած հեռախոսազրույցի ընթացքում քննարկել է Վրաստանի կողմից Եվրամիության հետ անայցեգիր ռեժիմի ստանալու հարցը:

«Երկու ղեկավարների խոսակցության գլխավոր թեման Վրաստանի եվրոպական ինտեգրացումն էր: Վարչապետը հեռախոսազրույցի ընթացքում մեկ անգամ եւս ընդգծեց այցեգրային ռեժիմի ազատականացման գործընթացը հաջող ու ժամանակին ավարտելու կարեւորությունը: Այս եւ այլ հարցեր վրացական ու գերմանական կողմերը կքննարկեն վարչապետի՝ Գերմանիա պաշտոնական այցի շրջանակներում»,- ասված է Վրաստանի կառավարության մամուլի ծառայության հաղորդագրության մեջ:

Նշենք, որ ԵՄ-ի երկրների պատվիրակությունները հունիսի 2-ին քննարկել են Վրաստանի համար այցեգրերի չեղարկման հարցը, բայց հետաձգել են վերջնական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԳՈՐԾԱԴԻՐԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կառավարությունը հերթական նիստում հաստատեց աշխատանք որոնողների մասնագիտական նախապատրաստման-վերապատրաստման եւ որակավորման բարձրացման պետական ծրագիրը:

Ինչպես հայտարարեց վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, վերոնշյալ ծրագիրը հանդիսանում է կառավարության կողմից իրականացվելիք բարեփոխումների չորս կետից բաղկացած ծրագրի բաղկացուցիչ մասը:

«Ծրագիրը բնորոշվում է մի շարք հանգուցային հարցերով: Նախ դա ոչ միայն անսովոր միջնորդություն է գործատուի եւ աշխատանք որոնողի միջեւ, այլեւ՝ մասնավոր հատվածի եւ պետության միջեւ համագործակցություն, որը հիմնվում է գործընկերային մոդելի վրա, ինչը նշանակալից գործոն է: Այդ գործոններից մեկը պոտենցիալ գործատուի ակտիվ մասնակցությունն է անմիջականորեն կադրերի պատրաստման գործում: Մեր գնահատմամբ, վերոնշյալ նախագիծը կլինի բավականին հաջողակ»,- հայտարարեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն:

ԱՅՑԵԳԻՐ

ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ-ՄԵՐԿԵԼ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԻ ԹԵՄԱՆ ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որոշումը: Գերմանիան ԵՄ-ի այն երկու պետություններից մեկն էր, որոնք դեմ են արտահայտվել Վրաստանին անայցեգիր ռեժիմ տրամադրելուն: Այդ հարցն արդեն քննարկման է ներկայացված Եվրախորհրդարանում: Դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է ԵՄ-ի բոլոր երկրների համաձայնությունը:

Ավելացնենք, որ Եվրահանձնաժողովը 2015 թվականի դեկտեմբերի 18-ին դրական եզրակացություն է հրապարակել ԵՄ-ի երկրների հետ այցեգրային ռեժիմի ազատականացմանը Վրաստանի պատրաստ լինելու մասին: Եթե եվրախորհրդարանականները հավանություն տան օրինագծին, Վրաստանի քաղաքացիները Շենգենյան գոտու երկրներում կկարողանան գտնվել 90 օրից ոչ ավելի:

ԱՅՑ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գության մարդու իրավունքների պաշտպանության եւ խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման հետ առնչվող հարցեր:

Հունիսի 8-ին Բրյուսելում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրամիության խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Եվրամիության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով եվրակոմիսար Յոհան Հանի հետ: Հանդիպումներում քննարկվեցին Վրաստան-Եվրամիություն համագործակցության հարցերը, առանձնակի ընդգծվեց անայցեգրային պայմանակարգի ներդրման կարեւորությունը:

Բրյուսելում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ նաեւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի հետ: Քննարկվեց ալյանսի հետ Վրաստանի համագործակցության սերտացման թեման:

ԽԻԶԱԲԱՎՐԱՅԻ ԴԱՐԱՎԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱՁՆՈՒՆԴ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է»

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ TBC GROUP-Ի ԲԱԺՆԵՏԵՐ ՄԱՄՈՒԿԱ ԽԱԶԱՐԱՇԵԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՍՊԸ-ի տնօրինության տակ:

Նշենք, որ մեսխեթյան դարավանդները զբաղեցնում են 23 հեկտար տարածություն, եւ դրա վերականգնման համար ներդրվել է կես միլիոն լարի: Դրանք գտնվում են Կուր գետի կիրճում: Դարավանդների վերականգնման աշխատանքներում ակտիվորեն ներգրավված է տեղական բնակչությունը՝ Խիզաբավրա գյուղի վարպետներն ու քարեգործները:

Միջոցառման կազմակերպիչները ներկայացրին եւս մի նախաձեռնություն, որը նախատեսում է Վարձիայի մոտակայքում գտնվող ճաճկար հինավուրց գյուղի վերականգնմանը: Նոր նախագիծը նախատեսում է պատմական բացառիկ հուշարձանի վերականգնումը եւ այն զբոսաշրջության կենտրոնի վերածումը: Այս նախագիծն էլ է իրականացվում մշակութային ժառանգության պաշտպանության Ազգային գործակալության, TBC Group-ի եւ «Վրացական տուն» միության նախաձեռնությամբ:

Նախագծի շնորհանդեսին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ իրականացվող աշխատանքները նպատակամղված են ապագա սերունդների համար մշակութային բացառիկ ժառանգության պահպանմանը:

«Մի քանի օր առաջ, գյուղատնտեսության նախարարի հետ եղա Բորդոյում, որտեղ բացվեց գինու թանգարանը «Cite du Vin»): Ֆրանսիայի նախագահը հրապարակավ հայտարարեց, որ Վրաստանը հանդիսանում է գինու քաղաքակրթության օրրանը: Դա մեծ ձեռքբերում է»,- հայտարարեց կառավարության ղեկավարը:

Գիորգի Կվիրիկաշվիլին համագործակցության համար շնորհակալություն հայտնեց TBC Group-ի ղեկավար Մամուկա Խազարաձեին:

Ասպինձայի շրջան կատարած այցի շրջանակներում, Գիորգի Կվիրիկաշվիլին եղավ նաեւ Վարձիայի ժայռափոր պատմական համալիրում, ծանոթացավ այստեղ իրականացվող վերականգնման աշխատանքներին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նշենք, որ «Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագիրն իրականացվում է 2015 թվականից Եվրոպական միության ֆինանսավորմամբ, եւ նպատակ ունի խթանել միջսահմանային շփումը ՏԻՄ-երի, համայնքների եւ քաղաքացիական հասարակությունների միջեւ, մասնավորապես, Վրաստանի Քվեմո Քարթլիի շրջանում եւ Հայաստանի Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում ընդհանուր սոցիալ-տնտեսական մարտահրավերները հաղթահարելուն ուղղված համատեղ լուծումներ մշակելու շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում ստեղծվել են 10 միջսահմանային համագործակցության նախագծեր, որոնք ներառում են Վրաստանից եւ Հայաստանից 33 կազմակերպություն: Նախագծերը միտված են լուծելու տարածաշրջանային զարգացմանն ուղղված տարաբնույթ խնդիրներ, մասնավորապես՝ խթանել տնտեսական զարգացումը, գրավել ներդրողներ Վրաստանի Քվեմո Քարթլիի շրջան եւ Հայաստանի Տավուշի մարզ, նորարարական զբոսաշրջային ուղիներ մշակել, իրականացնել Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի եւ Հայաստանի Շիրակի մարզի բնական ռեսուրսների պահպանմանն ուղղված ծրագրերը: Հատուկ ուշադրություն է հատկացված երիտասարդների խնդիրներին, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կրթությանը, երիտասարդների զբաղվածությանը, ինչպես նաեւ Գյումրիի ու Բոլնիսիի դեռահասների միջեւ հաղորդակցության խթանմանը:



ԹՈՒՐՔԻԱ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ՝ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Հունիսի 7-ի առավոտյան պայթյուն է որոտացել Ստամբուլի մետրոյի Վեզնեջիլեր կայարանի մոտակայքում: Ոստիկանական մեքենայի անցնելու ժամանակ հեռակառավարման միջոցով պայթեցվել է կայանած մեքենան: Պայթյունի հետեւանքով վնասվել են հարակից շինություններն ու ավտոմեքենաները: Պայթյունից հետո լսվել են կրակոցներ:

Պայթյունի հետեւանքով մահացել է 11 մարդ՝ 7 ոստիկան եւ 4 քաղաքացիական անձ, 36 մարդ վիրավոր է, ընդ որում, նրանցից 3-ի վիճակը ծանր է: Պայթյունի հետեւանքով դադարեցվել են քննությունները Ստամբուլի համալսարանում:

ՂԱԶԱԽՍՏԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՔՏՈԲԵՈՒՄ

Հունիսի 5-ին ահաբեկչական հարձակման օբյեկտ դարձան Ղազախստանի Ակտոբե քաղաքի հաստատությունները: Ինչպես տեղեկացրել է երկրի ՆԳ նախարարությունը, Ղազախստանի ուժայիններն Ակտոբե քաղաքում ոչնչացրել են 13 ծայրահեղականի, եւս 4-ը վիրավորված են: Հաղորդագրության մեջ նշված է նաեւ, որ յոթ հոգու հաջողվել է փախչել, այժմ նրանք հետախուզման մեջ են: Երկրի ներքին գործերի մարմինների ողջ անձնակազմը շարունակում է ծառայություն իրականացնել ուժեղացված ռեժիմով: Քաղաքում եւ, ընդհանուր առմամբ, հանրապետությունում իրավիճակը կայուն է եւ վերահսկողության տակ:

ԱՄՆ ՄԱՀԱՑԵԼ Է ԼԵԳԵՆԴԱՐ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿ ՄՈՒՀԱՄԵԴ ԱԼԻՆ



«Պարկինսոն»-ի հիվանդության դեմ պայքարից հետո, որը տեւեց 32 տարի, 74 տարեկանում մահացավ լեգենդար բոնցքամարտիկ Մուհամեդ Ալին (Կասիուս Մարցելուս Քլեյ կրտսեր):

Ալին 1960թ. 17-րդ ամառային Օլիմպիական խաղերի չեմպիոն՝ թեթեւ ծանրքաշային կարգում, ծանրքաշային կարգում աշխարհի բացարձակ չեմպիոն (1964-1966, 1974-1978), 5 անգամ արժանացել է «Տարվա բոնցքամարտիկ» տիտղոսին (1963, 1972, 1974, 1975, 1978), «Տասնամյակի բոնցքամարտիկ» (1970-ականներ): 1974 թվականին, ճանաչվել է «Դարի մարզիկ»: Կարիերայի ավարտին ընդգրկվել է Բոնցքամարտի փառքի սրահում (1987) եւ Բոնցքամարտի միջազգային փառքի սրահում (1990):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԹԲԻԼԻՍՑԻ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Հունիսի 4-ին Ախալքալաքիի մշակույթի տանը թբիլիսցի գրողներ Գիվի Շահնազարը, Մաղվալա Գոնաշվիլին եւ Անահիտ Բոստանջյանը, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարարության «Բազմերանգ Վրաստան» նախագծի շրջանակներում, հանդիպեցին տեղական բնակչության հետ, հանդես եկան խոսքով եւ ներկայացրին իրենց ստեղծագործություններից:

Միջոցառման շրջանակներում ներկայացվեցին Վրաստանի մշակույթն ու հուշարձանների պաշտպանության նախարարության աջակցությամբ հրատարակված «Մեսխեթական բանահյուսություն» եւ Վրացական գրքի ազգային կենտրոնի աջակցությամբ հայերեն ու վրացերեն հրատարակված թարգմանական գրքերը: Հավաքվածներին ներկայացվեցին կարճամետրաժ գեղարվեստական կինոնկարներ, ցուցադրվեցին տեղի երիտասարդ նկարիչների ու լուսանկարիչների աշխատանքները: Նախագծի շրջանակներում տեղի դպրոցներին եւ գրադարաններին նվիրվեցին նախարարության աջակցությամբ լույս տեսած գրքերը: Հավաքվածները դիտեցին նաեւ Թբիլիսիի «Գարրի Դավթյան» տիկնիկային թատրոնի Ժաննա Դավթյանի կողմից ցուցադրված թատերականացված տեսարաններ: Միջոցառումների երաժշտական ձեւավորումն իրականացրեց Թբիլիսիի կոնսերվատորիայի ռեկտոր, երաժշտագետ Ռեւազ Կիկնաձեն:

«Բազմերանգ Վրաստան» նախագիծը, որի նպատակն է աջակցել Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը երկրի մշակութային կյանքին, բարձրացնել ստեղծագործական կրթության մակարդակը, զարգացնել ստեղծագործական ունակությունները: Նախագիծը մինչեւ սեպտեմբերի 17-ը նախատեսում է նույնատիպ մշակութային միջոցառումների անցկացում նաեւ Նինոծմինդայում, Ծալկայում եւ Բոլնիսիում, իսկ Մառնեուլիում այն կայացել է ապրիլ ամսին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՄԼՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻՆ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՐԹԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նորանշանակ նախարար Ալեքսանդր Ջեջելավան ներկայացրեց 2017-2023 թվականների նոր ուսումնական ծրագիրը, որը լրիվությամբ կողմնորոշված է կոնկրետ աշակերտի անհատական պահանջարկի ուղղությամբ:

Նոր ուսումնական ծրագրի շրջանակներում կհիմնվի ուսումնական այնպիսի միջավայր, որը յուրաքանչյուր աշակերտին առավելագույնս կօգնի զարգացնել իր ունակությունները: Այդ նպատակին հասնելու համար կիրականացվեն մի շարք փոփոխություններ, մասնավորապես, ուսուցիչներին կտրվի տվյալ երեխայի ֆիզիկական ու հոգեբանական տվյալների հաշվառման, նրա զարգացման տեմպի նկատառմամբ, դասավանդման ոճի, ակադեմիական կարիքների ընտրության հնարավորություն:

«Ազգային ուսումնական ծրագիրը՝ դա մեր կրթական ընդհանուր համակարգի ողնաշարն է: Մեր երկիրը փոխվում է, փոխվում է կրթական համակարգը, փոխվում են երեխաները, տեխնոլոգիաները, փոխվում է ամեն ինչ, եւ, հետեւաբար, մենք այսօր երեխաներին, որոնք ծնվել ու մեծացել են համացանցի աշխարհում, չենք կարող ուսուցանել նախկին մեթոդներով»,- հայտարարեց Ալեքսանդր Ջեջելավան:

Նախարարը նշեց նաեւ, որ ազգային ուսումնական նոր ծրագիրը որպես բազային փաստաթուղթ կսահմանի, թե երբ եւ ինչպես պետք է դասավանդել Վրաստանի դպրոցներում: Այն պարբերաբար պետք է նորացվի ու ներկայացնի ինչպես ուսուցիչների եւ աշակերտների պահանջները, այնպես էլ՝ արտահայտի կրթության ոլորտում միջազգային պրակտիկան, արդի միտումները:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՏՐՎԵԼ Է ՇՈՒՐՋ 2900 ԱՇԱԿԵՐՏ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԿՏՐՎԱԾՆԵՐԻՆ ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ ՄՈՒԾՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ

Այս տարի շուրջ 2900 դիմորդ չի կարողանա մասնակցել միասնական ազգային քննություններին:

Ինչպես հայտարարեցին քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնում, նրանք չկարողացան դպրոցի ավարտական քննություններին հաղթահարել առարկայական առանձին վերցրած քննության արգելագիծը:

Ավարտական քննություններին մասնակցող աշակերտների 98 տոկոսը հաջողությամբ հաղթահարեց վրաց լեզվի եւ գրականության քննության նվազագույն արգելքը: Քննությանը չի ներկայացել աշակերտների 2 տոկոսը:

Օտար լեզվի քննությանը 85 տոկոսը հաղթահարել է նվազագույն արգելագիծը:

Պատմության քննությանը նվազագույն արգելագիծը հաղթահարել է 86 տոկոսը:

Ընդհանուր առմամբ, ավարտական քննությունների համար գրանցվել էր շուրջ 47 հազար աշակերտ, իսկ միասնական ազգային քննության գրանցում կատարել է 41500 դիմորդ:

Միասնական ազգային քննություններին հանձնվելիք յուրաքանչյուր առարկայական քննության համար դիմորդները մուծել են 10 լարի: Որպեսզի գումարը փոխհատուցվի, պետք է դիմում ներկայացնել գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնին:

ՀՈՒՆԻՍԻ 16-17-Ը՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕՐԵՐ

Դպրոցներում ավարտական քննությունների համար լրացուցիչ նշանակվել են հունիսի 16-ը եւ 17-ը: Համապատասխան հրամանը Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան ստորագրեց նախօրյակին:

Հրամանի համաձայն, լրացուցիչ քննություններ կանցկացվեն այն անձանց համար, ովքեր օբյեկտիվ հանգամանքների պատճառով չկարողացան ներկայանալ դպրոցի ավարտական քննությանը:

Վերոնշյալ հրամանագիրը տեղակայվել է Վրաստանի գիտության եւ կրթության պաշտոնական կայքէջում:



ՆՈՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ՝ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ԳՈՏՈՒՄ

Ընթացիկ տարվա հունիսի 6-ին Ռուսաստանի օկուպացիոն ուժերի կողմից Քարելիի շրջանի Ավլեւ գյուղի հարակից տարածքում տեղի բնակչության սեփականության ներքո գտնվող գյուղատնտեսության նշանակության հողահանդակներում ապօրինի տեղակայվել են սահմանային նոր վահանակներ:

Վրաստանի ԱԳ նախարարությունը բռնազավթված գոտում Ռուսաստանի օկուպացիոն ուժերի կողմից իրականացրած վերոնշյալ գործողությունը նշանակել է որպես հերթական սադրանք, որն ուղղված է իրավիճակի լարմանը եւ դրա ապակայունացմանը:

Պաշտոնական Թբիլիսին համապատասխան արձագանքի պահանջով դիմել է համաշխարհային հանրությանը՝ համապատասխան արձագանքման համար:

ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԱՄՐԱՆՈՒՄ Է

Վերջին ամիսների ընթացքում վրացական տարադրամը՝ լարին ամրանում է, ինչը բնակչության շրջանում հանգստության, կայունության իրավիճակ է ստեղծում: Նշենք, որ ընթացիկ տարվա հունվարին, լարիի համարժեքը դոլարի համեմատությամբ, կազմում էր 2,5 միավոր, որից հետո այն սկսեց աստիճանաբար նվազել եւ ներկայումս 1 դոլարի դիմաց լարիի փոխարժեքը կազմում է 2,12-2,14:

«ՌՈՒՍԹԱՎԻ-2»-Ի ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄՆԱՑ ՈՒԺԻ ՄԵՋ

Հունիսի 10-ին Թբիլիսիի վճռաբեկ դատարանը ուժի մեջ թողեց «Ռուսթավի-2» հեռուստաընկերության գործով առաջին ատյանի դատարանի որոշումը: Մասնավորապես, վճռաբեկ դատարանը հեռուստաընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը թողեց գործարար Քիբար Խալվաշու սեփականության ներքո:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆՎԱԶԵԼ Է ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹԻՎԸ

Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալներով, 2014 թվականի համեմատությամբ, 2015 թվականին Վրաստանում գործազուրկների թիվը նվազել է 0,4 տոկոսով եւ ներկայումս կազմում է աշխատունակ բնակչության 12 տոկոսը:

Ծառայության տեղեկատվությամբ, 2015 թվականին գործազրկության մակարդակը վերջին տասներկու տարիների ընթացքում ամենացածրն էր: Նույն ծառայության տվյալներով, 2015 թվականին տնտեսական ակտիվ բնակչությունը կազմում է աշխատունակ բնակչության 67,8 տոկոսը:

Ավանդաբար աշխատողների շրջանում գերազանցում է ինքնասպասարկմամբ զբաղվածների թիվը: 2014 թվականի համեմատությամբ, վարձու աշխատողների թիվը ավելացել է 8,8 տոկոսով, իսկ ինքնասպասարկմամբ աշխատողներինը, ընդհակառակը, նվազել է 2,7 տոկոսով: Գործազուրկների մակարդակը համեմատաբար նվազ է գյուղական բնակչության շրջանում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «Ի ԴԵՄՍ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ՝ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ԻՄ ԵՐԱՁԱՆՔԻ ՄԱՐԴՈՒՆ»

Հունիսի 7-ին Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ երկրի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Գրեթե երկուսուկես ժամ տեւողության մամլո ասուլիսում նախկին վարչապետն անդրադարձավ երկրի սոցիալ-տնտեսական եւ ներքին ու արտաքին քաղաքական հրատապ հարցերին, իր նկատառումները հայտնեց այս կամ այն իրադարձության վերաբերյալ:

Բիձինա Իվանիշվիլին խոսեց նաեւ կոնկրետ պաշտոնատար անձանց վերաբերյալ: Մասնավորապես, խոսելով երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու մասին, նա նշեց, որ ի դեմս Վրաստանի ներկայիս վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, տեսել է իր երիտասարդության երազանքի մարդուն:

«Ես Գիորգիի (Կվիրիկաշվիլու) մեջ տեսել եմ իմ երիտասարդության երազանքի մարդուն: Նա հավասարակշռված է, մարդկային, ազնիվ եւ, դրա հետ մեկտեղ, լավ պրոֆեսիոնալ կառավարիչ է, ֆինանսիստ եւ այլն»,- ասաց Բիձինա Իվանիշվիլին Վրաստանի ազգային հեռուստաալիքների ներկայացուցիչների հետ կայացած մամուլի ասուլիսում:

Դրա հետ մեկտեղ, բնութագրելով ներկայիս վարչապետին, Բիձինա Իվանիշվիլին նշեց, որ Կվիրիկաշվիլին իր համար հայտնագործություն է ու ազնվության օրինակ:

Ինչ վերաբերում է Գիորգի Մարգվելաշվիլուն, ապա նա հաճախ «ջուր է լցնում ազգայինների ջրաղացին», թեպետ չի գտնում, որ նախագահը «ազգայինների» մարդն է:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ-2016

Լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմանը, նախկին վարչապետը բավականին ժամանակ հատկացրեց առաջիկա ընտրությունների թեմային: Նա ներկայացրեց իր կանխագծումները: Նրա խոսքերով, այս տարի կանցկացվեն բացառիկ ընտրություններ, որոնք, ի տարբերություն 2012 թվականի խորհրդարանական, 2013 թվականի նախագահական եւ 2014 թվականի ինքնակառավարման ընտրությունների, կլինեն «շատ ավելի լավը»:

Բիձինա Իվանիշվիլին գտնում է, որ ընտրություններին «Վրացական երազանքը» կստանա 95 մանդատ, իսկ «Ազգային շարժման» առջեւ կծագի արգելագիծը հաղթահարելու հիմնախնդիրը: Ինչպես հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին, ինքը պարբերաբար ուսումնասիրություններ է կատարում եւ իրականում քաջատեղյակ է ստեղծված իրավիճակից:

ԷԿՈՆՈՄԻԿԱՆ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ 10-15 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմանը նշեց, որ երկիրը տնտեսական առաջընթաց է ապրում, ինչը արտահայտվում է թվերով ու տոկոսներով: Նրա խոսքերով, վերջին երեք-չորս տարիների ընթացքում այդ ուղղությամբ արվել է առավելագույնս, թեպետ Վրաստանը դեռեւս զգալիորեն զիջում է զարգացած էկոնոմիկայով երկրներին: Իվանիշվիլին գտնում է, որ դրա համար գործող իշխանությանը մեղադրել չի կարելի, քանի որ իրավիճակի շտկումը չորս տարվա ընթացքում անհնարին է: «Կարգավորման համար կպահանջվի մոտավորապես 10-15 տարի»,- ասաց Բիձինա Իվանիշվիլին: Կոնկրետացնելով իր խոսքերը, նախկին վարչապետը նշեց, որ ներկայումս կրկնակի ավելացված է ճեպընթաց ճանապարհների կարգավորման տեմպը եւ դա 14 տոկոսով ավելի էժան է նախկին իշխանության կողմից իրականացված աշխատանքներից: Նրա խոսքերով, բավականին բարձր է շինարարության տեմպը, այն Թբիլիսիում գերազանցել է 70 տոկոսի բնագիծը, Բաթումիում՝ 76-ի, իսկ ընդհանուր առմամբ, Վրաստանում՝ 56 տոկոսի բնագիծը:

Նրա խոսքերով, վերանորոգվել, գործարկվել եւ կառուցվել է շուրջ 700 արտադրություն, այդ թվում՝ 129 արտադրամասեր են, որտեղ ստեղծվել է 55 հազար նոր աշխատատեղ:

ԴՊՐՈՑ

ՏԽՈՒՐ, ԲԱՅՑ ԵՐՋԱՆԻԿ ՀՐԱԺԵՇՏ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻՆ

Մեր կյանքի անխուսափելի երեւույթներից մեկը կենսաթոշակի անցնելն է: Տխուր, բայց օրինաչափ մի անհրաժեշտություն, որ կամա-ակամա բախում է յուրաքանչյուրի դուռը, ուզի, թե չուզի՝ օրերից մի օր այցելում յուրաքանչյուր բանվորի, բժշկի, գիտնականի, մանկավարժի, թե պետական գործչի... Ստիպում նրան հրաժեշտ տալ իր առօրյան իմաստավորող գործին, փոխել մինչ այդ անփոփոխ թվացող կյանքի ռիթմը... Եվ երբ այդ անխուսափելին գալիս է, պարզվում է, խիստ կարեւոր է, որ, հրաժեշտը կոլեկտիվի հետ, լինի փոխադարձ ափսոսանքի զգացումով...

Այդ երջանիկ հրաժեշտին արժանացան Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցի բազմամյա ու բազմավաստակ մանկավարժներ Վիոլետա (Միրանդա) Մաղաշվիլին եւ Ասյա Բաղդասարյանը: Նրանց պատվին կազմակերպված հրաժեշտի միջոցառումը ջերմ ու արցունքոտ էր... Միջոցառման ավարտին, դպրոցի տնօրինությունն իր վաստակաշատ մանկավարժներին պարգեւատրեց շնորհակալագրերով՝ մանկավարժական բազմամյա վաստակի համար:

Ինչո՞վ էին այս ուսուցիչները վաստակել աշխատանքային ընկերների նման վերաբերմունքը: Պատասխանի համար հպանցիկ թերթենք բազմամյա կրթօջախի տարեգրությունը, նաեւ իրենց մարդկային ու մանկավարժական օրինակելի դիմագծով հարստացրած այդ ուսուցիչների կյանքի էջերը...

Տիկին Միրանդան 75 տարեկան է, բնիկ թբիլիսցի է, ծնվել է նկարչի ընտանիքում: 1964թ. Թբիլիսիի Իվ.Զավախիշվիլու անվան պետհամալսարանի Արեւմտյան Եվրոպայի լեզուների եւ գրականությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի բաժինը ավարտելուց հետո՝ կյանքի տարբեր հատվածներում նրան վիճակվել է անգլերեն լեզու դասավանդել Թբիլիսիի վրացական մի քանի դպրոցումներում, մանկապարտեզում: Ի դեպ, դպրոցից դպրոց տեղափոխվելը եղել է այդ դպրոցների փակման հետեւանքով: Աշխատանքային վերջնական հանգրվանը, ուսուցչուհու համար, դառնում է հայկական կրթօջախը՝ Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցը, ուր նա աշխատել է 1990 թվականից ցայսօր, շուրջ 30 տարի...

Տիկին Ասյան բնիկ թբիլիսցի է, լրացավ նրա 74 տարին: 1958-ին ավարտել է Թբիլիսիի Հավլաբարում գտնվող թիվ 93 հայկական դպրոցը, 1962-ին՝ մայրաքաղաքի

Միրանդա Մաղաշվիլի Ասյա Բաղդասարյան

Ա.Պուշկինի անվան (այժմ՝ Իլիայի անվան մանկավարժական համալսարան) մանկավարժական ինստիտուտի տարրական ֆակուլտետը: Մասնագիտական մկրտությունն ստացել է Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջանի Հեշտիա գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ երեք տարի աշխատել է՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի: 1965-ից մինչ օրերս նրա մանկավարժական գործունեությունը կապվում է Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի հետ: Այստեղ նրան, ռուսերենի վարժ իմացության շնորհիվ, որն աշխատանքային տարիներին ամրապնդվում է հատուկ դասընթացներով, միաժամանակ վստահվում է նաեւ ռուսաց լեզու եւ գրականություն առարկաների դասավանդումը: Կես դարից ավելի, շուրջ 55 տարի «ընկեր Ասյան» մտել է դասարան՝ մայրական սիրով ու մասնագիտական արհեստավարժությամբ զինված: Իր աշխատանքի ջանադիր պտուղների արդյունքը, հարկավ, դպրոցի մատյաններում արձանագրված այն հաղթանակներն են, որին արժանացել են նրա՝ հանրապետական ստուգատեսներին եւ օլիմպիադաներին մասնակցած սաները: 2014 թ.-ին ուսուցչուհին պարգեւատրվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Ոսկե մեդալով»:

Մարդկային առանձնահատուկ հատկանիշներ է պահանջում միեւնույն կոլեկտիվում տասնամյակներ շարունակ փոխըմբռնմամբ աշխատելը: Պարզվեց, որ «ընկեր Ասյան» եւ «ընկեր Միրանդան» տիրապետում են այդ առանձնահատուկին: Բարեհամբույր, կիրթ, մեղմ, ընդառաջող, իրենց գործին գիտակ եւ այն մեծագույն սիրով ու պատրաստակամությամբ կատարողներ: Հմուտ տիրապետելով մանկավարժի դժվարին գործին՝ դարձել են ուսուցիչների մի քանի սերունդների խորհրդատուն, օգնականն ու առաջնորդը, եղել խստապահանջ թե՛ իրենց, թե՛ գործընկերների հանդեպ: Այսպիսին են նրանց ճանաչում կոլեգաներն ու սաները: Ահա ինչու, նրանց հրաժեշտ տալիս, անհնար եղավ զսպել արցունքները...

Խորին ու ճշմարիտ գնահատանք, հարգանք, սեր եւ նաեւ ցավ ու ափսոսանք կար դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի, փոխտնօրեն Ալմարի Սիրադեղյանի, դպրոցի նախկին տնօրեն, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական ծրագրերի համակարգող Կարինե Մանուկյանի, մանկավարժներ Կարինե Հովհաննիսյանի, Մարինե Արշակյանի, Լիա Նացվլիշվիլու, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության Ազգային ծրագրերի փոխկապակցման նախկին պետ, մանկավարժ Նորայր Բաղդասարյանի՝ կոլեգաներին բնութագրող խոսքում, որը փաստվեց՝ կրթօջախի լավ ու վատ օրերը, տարբեր ժամանակների բերած մարտահրավերները, նրանց հետ, թիկունք--թիկունքի հաղթահարած հուշերով... Խոսվեց նաեւ ուսուցչուհիների մարդկային հատկանիշների մասին, ընդգծվեց նրանց նրբազգացությունը, խորաթափանցությունը, ինչով եւ, մանկավարժության դժվարին ճանապարհին, կարողացել են նվաճել պատանի սաների վստահությունը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՐԱՏԱՊ

ՍՊԱՌՈՂԱԿԱ՞Ն ՎԱՐԿ, ԹԵ՞ ԱՊԱՌԻԿ

Սպառողակա՞ն վարկ, թե՞ ապառիկ՝ ի՞նչ պետք է իմանալ բանկային այս սպասարկումներից օգտվելիս:

Հավանաբար, ձեզանից շատերն են հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ կոնկրետ իրի կամ սպասարկման ստացման համար ստիպված ընտրություն եք կատարել բանկային վերոնշյալ երկու սպասարկումների միջեւ՝ սպառողական վարկի եւ ապառիկի միջեւ:

Ինչո՞վ են միմյանցից տարբերվում սպառողական վարկն ու ապառիկը, բանկային այս սպասարկումներից ֆինանսական առումով ո՞րն է առավել արդյունավետը, եւ ինչի՞ վրա պետք է բեւեռել ուշադրությունը այս երկու սպասարկումներից օգտվելու ժամանակ:

Վերոնշյալ թեմաների շուրջ զրուցեցինք ՏԲՏ բանկի գլխավոր տնօրենի տեղակալ ՆԻՆՈ ՄԱՍՈՒՐԱՇՎԻԼՈՒ հետ:

- ***Ընդհանուր եւ տարբերվող ի՞նչ յուրահատկություններով են տարբերվում սպառողական վարկը եւ ապառիկը:***

- Սպառողական վարկը եւ ապառիկը բանկային սպասարկումներ են, եւ դրանք սպառողական նպատակներով վարկեր են ներկայացնում: Դրանց միջեւ հիմնական տարբերությունն այն է, որ ապառիկի դեպքում ձեզ համար ցանկալի իրը կարող եք գնել անմիջականորեն գործընկեր խանութում այնպես, որ բանկ այցելել չպահանջվի: Իրի արժեքը անմիջականորեն կփոխանցվի գործընկեր ընկերության հաշվին:

Իսկ սպառողական վարկի դեպքում, բանկից ստանում են կանխիկ գումար եւ այն կարող են օգտագործել ըստ ցանկության: Կարելի է նաեւ պահանջել ցանկալի լիմիտը:

Սպառողական վարկը եւ ապառիկը միմյանցից տարբերվում են նաեւ այլ պարամետրերով: Մասնավորապես.

* Ապառիկը սպառողի համար հաստատվում է 15 րոպեում, միայն անձը հաստատող վկայականի ներկայացման դեպքում, իսկ սպառողական վարկի հաստատման համար անձնական վկայականի հետ միասին հնարավոր է նաեւ աշխատավարձի մասին տեղեկանքի եւ այլ փաստաթղթերի ներկայացում: Վարկի հաստատման համար կպահանջվի 15 րոպեից մինչեւ մեկ ժամ ժամանակ:

* Ապառիկից օգտվելու ժամանակ ցանկալի իրի նվազագույն արժեքը 100 լարի է, իսկ առավելագույնը՝ 5 հազար լարի: Այն դեպքում, երբ սպառողական վարկի լիմիտը սկսվում է 300 լարիից, եւ դրա առավելագույն չափը կազմում է 40 հազար լարի:

- ***Բանկային վերոնշյալ սպասարկումներից ո՞րն է առավել արդյունավետը եւ նպատակահարմարը սպառողի համար՝՝ սպառողակա՞ն վարկը, թե՞ ապառիկը:***

- Բոլոր դեպքերում, երկու սպասարկումներն էլ արդյունավետ են ու հարմարավետ: Դա կախված է սպառողի կարիքներից ու պահանջարկից:

Ապառիկի արդյունավետությունը, ինչպես արդեն նշեցի, կախված է նրանից, որ դրա հաստատումը պակաս ժամանակ է պահանջում եւ բանկ այցելելու անհրաժեշտությունը վերանում է: Թեպետ, ապառիկից օգտվելիս, սպառողը պետք է հաշվի առնի նաեւ այն, որ ապառիկը գումարի առումով սահմանափակ է, եւ այդ սպասարկումից օգտվելը ցանկացած այլ նպատակի համար մատչելի չէ:

Ապառիկը մատչելի է ինչպես բանկի մասնաճյուղերի, այնպես էլ՝ սերվիս կենտրոնների, ինչպես նաեւ անմիջականորեն խանութների ու սպասարկման օբյեկտների համար, որոնց թիվը, ընդհանուր առմամբ, հասնում է 450-ի:

Սպառողական վարկի դեպքում, սպառողը պետք է ներկայանա բանկի մասնաճյուղ կամ սերվիս կենտրոն, այն հնարավոր չէ ստանալ անգամ ինտերնետ բանկից: Սպառողական վարկով նպատակայնորեն կարելի է ձեռք բերել ցանկացած ամեն ինչ, լիմիտները տվյալ պարագայում անհամեմատ մեծ են, սպառողին տրվում է ինքնուրույն տնօրինել ստացած գումարը:

- ***Ի՞նչ է նշանակում 0 տոկոսանոց ապառիկ:***

- 0 տոկոսանոց ապառիկն ընկալվում է որպես բոլոր տեսակի հավելածախսերից (գումարի ստացման, նախնական մարման եւ այլ կոմիսիոն ծախսեր) ազատ ապառիկ, առանց դուրս գալու սպասարկման օբյեկտից:

0 տոկոսանոց ապառիկով ցանկացած սպառող կարող է գնել ցանկալի իր եւ ստանալ սպասարկում՝ ներկայացնելով միայն անձը հաստատող վկայականը, ընդամենը՝ 15 րոպեում:

- ***Ո՞ր պարամետրերը պետք է միմյանց հետ համեմատել ֆինանսական ճիշտ որոշում ընդունելու ժամանակ, երբ մեկ ընդհանուր հիմնախնդրի լուծման համար կանգնած ենք սպառողական վարկի եւ ապառիկի ընտրության առջեւ:***

- Սպառողական վարկի եւ ապառիկի միջեւ ընտրություն կատարելիս, հարկ է հաշվի առնել այն, թե դրանցից որն է կապված առավել պակաս ծախսերի հետ: Նման դեպքերում, սպառողը պետք է հաշվի առնի հետեւյալ գործոնները.

* միեւնույն ժամկետով վերոնշյալ սպասարկումներից, որի տոկոսադրույքն ավելի պակաս է (պարտադիր կարգով պետք է նշել, որ վարկատուն, որը հանձնում է վարկը, պարտավոր է պարզաբանել, թե որքանով է տոկոսադրույքը արդյունավետ),

* ո՞ր դեպքում է ամսական պարտադիր մուծումն առավել պակաս՝ սպառողակա՞ն վարկի, թե՞ ապառիկի դեպքում,

* ինչո՞վ է պայմանավորված սպառողի կողմից գումարի ստացման անհրաժեշտությունը՝ գույքի գնմա՞ն, թե՞ անձնական ծախսերի մարման համար,

* ի՞նչ չափի գումար է անհրաժեշտ սպառողին. եթե պահանջվում է 5 հազար լարիից ավելի գումար, ապա այդ դեպքում նա պետք է վերցնի սպառողական վարկ:

- ***Ի՞նչ է նշանակում գումարի արդյունավետ տոկոսադրույք, եւ ինչո՞ւ պետք է սպառողը առանձնակի ուշադրություն հատկացնի այդ հարցին:***

- Արդյունավետ տոկոսադրույքը ներկայացնում է կոնկրետ սպասարկման ստացման հետ կապված պարտադիր բոլոր ծախսերի պատկերը: Սույն պարամետրը ներառում է սպասարկման նոմինալ դրույքը պլյուս՝ լրացուցիչ ծախսերը, ինչպիսիք են, օրինակ, վարկի/ապառիկի ստացման դեպքում կոմիսիոն ծախսը կամ ապահովագրման կոմիսիոն դրույքը, կամ հաշվից գումարի ստացման կոմիսիոն դրույքը: Նշանակալից է, որ սպառողը արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա ընդունի որոշումը, որպեսզի կոնկրետ սպասարկման կապակցությամբ լրիվ պատկերացում կազմի ծախսերի վերաբերյալ:

- ***Սպառողական վարկի կամ ապառիկի դեպքում, անհրաժե՞շտ է արդյոք, դրանց ապահովագրումը, եւ եթե այո, ապա՝ ի՞նչ տեսքով:***

- Գումարի ապահովագրումը հնարավոր է իրականացվի երկու տեսքով՝ երաշխավորագրով կամ անշարժ գույքը հիպոթեքային ներկայացման՝ հօգուտ վարկատուի: Որպես օրենք՝ ապահովագրությունը պահանջվում է համեմատաբար բարձր սպառողական վարկերի դեպքում: Ընդհանուր առմամբ, ապառիկի ժամանակ բանկը ապահովագրություն չի պահանջում: